№ 118 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19 **1891** ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19 № 118

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ.
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Հիւանդանոց բանւորների համար. Մի պատասխան. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Աւստրիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ· —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Մի քանի խօսք.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս օրերս Թիֆլիսի քաղաքային դումայում մի առաջարկութիւն արվեց՝ մի գումար յատկացնել Թիֆլիսում բանւորների համար հիւանդանոց բանալու նպատակով: Դուման ընդունեց այդ առաջարկութիւնը:

Քարասիրտ մարդ պէտք է լինել անտարբերութեամբ վերաբերվելու համար դէպի մի այնպիսի գործ, որը ծառայելու է բանւորների բարօրութեան, այսինքն մի այնպիսի դասակարգի բարօրութեան, որը մի կտոր չոր հացի գերի դառած և քաղցամահ չը լինելու համար՝ վատնում է իր ֆիզիկական ոյժերը գործարանների ապականված և խեղդող օդի մէջ: Այդ մարդիկ ամբողջ օրը անդադար բանելով, կամ ծխախոտի փակված գործարարում, կամ մութ ու խոնաւ նկուղներում գտնվող գարբնոցներում, կամ դուրսը տանջվելով ամառվայ արեգակի կիզիչ ճառագայթների տակ և ձմեռվայ սարսափելի ցրտի մէջ, ընկանատէս շատ շուտ են ենթարկվում զանազան հիւանդութիւնների, իսկ այդ հիւանդացած ժամանակ նրանք ոչ թէ միջոց ունեն բժշկական խորհրդի և դեղերի համար, այլ ձեռքն աշխատանքից հեռացնելուն պէս, զրկվում են և իրանց օրական մի կտոր չոր հացից: Բանւորը փող չունի պահած իր ու օրվայ համար, քանի որ իր օրական մի քանի կոպէկ աշխատանքով ինքն է ապրել, կնոջն է ապրեցրել, հագցրել, երեխաներ է պահել.... Հացավաճառը, տեսնելով որ մարդը այլ ևս չէ աշխատում, դադարում է նրան այլ ևս ապառիկ հաց տալուց. դրան հետևում են և միւս կենսական մթերքներ վաճառողները, որոնք նրա առողջ ժամանակ ապառիկ տալիս էին նրան.... Երևակայեցէք. ահա, մի կմախք դարձած, գործարանի ճնշումներից ուժասպառ եղած, ոսկրացած ձեռքերն ու գունատված դէմքը մուրով սևացրած մարդ, գլուխը մի կողմ ծռած, մի ձեռքով բռնած իր նման թշուառ ընկերի ուսից, իսկ միւս ձեռքով պատը չօշափելով՝ թոյլ ոտներով մտնում է իր փոքրիկ, խոնաւ, մութ խրճիթը և տնքալով վայր ընկնում բնակարանի մի կողմում. նրա կինը տեսնելով այդ, լեղապատառ է լինում. նա անմիջապէս զգում է իր գլխի գալիքը... զգում է, որ միւս օրը ամբողջ ընտանիքը քաղցած է մնալու: Կինը իսկոյն դիմում է տնային կոպիտ միջոցների իր մարդուն առողջացնելու համար, սակայն այդ միջոցներով հիւանդն աւելի ծանրանում է, և ահա մի քանի օրից յետոյ հիւանդը անճար է մնացած. նրան բժշկող չը կայ. իսկ քաղաքային հիւանդանոցում կամ տեղ չը կայ, կամ ընդունելու համար երաշխաւորութիւն են պահանջում նրանից՝ հիւանդանոցի որոշված վճարը ստանալու համար: Նա ոչ ուտելու հաց ունի այժմ, ոչ վառելու փայտ. պառկած է մութ ու ցուրտ բնակարանում, չոր անկողնի մէջ, մի պատառոտված կեղտոտ վերմակի տակ, և այդպիսով հիւանդութիւնը, քաղցածութիւնը, ցուրտը ձեռք ձեռքի տուած, միահամուռ ոյժով մարդուն տանում են դէպի գերեզման:

Թող հասկանան մեր բարեսիրտ ձանձաւորները, որ եթէ ուզում են իրանց կեանքում մի բարի գործ կատարած լինել, պէտք է իրագործեն յիշեալ առաջարկութիւնը, գոնէ մի առ ժամանակ հանգստացնելով իրանց միմեանց դէմ լարված կրքերը և մի կողմ թողնելով անձնական խնդիրները: Մենք չենք կարծում, որ մեր նոր դուման կը բոլորէ իր քառամեակը, առանց մի որ և է գործ կատարելու, և եթէ նա զլանում է շատ կիսատ մնացած գործերի ձեռնարկել և վերջացնել, թող գոնէ այս գործում արիութիւն ցոյց տայ:

Բանւորական հիւանդանոցը ֆիզիկական աշխատանքին ենթարկված մարդու համար փրկութիւն կը լինի. բանւորը հիւանդանալուց գոնէ իր պառկելու համար կունենայ մի մաքուր, լուսաւոր, տաք սենեակ, կունենայ տաք կերակուր, բժիշկ, դեղ և այլն. նա այդտեղ կը վերանորոգէ իր սպառված ոյժերը, կենդանութիւն, թարմութիւն կը ստանայ և նորից կը շարունակէ իր աշխատանքը: Բանւորները, այդ ամեն կողմից թշուառ դասակարգի մարդիկ այնքան անապահով են, որ մինչև անգամ իրանց հիւանդացած միջոցին էլ, հիւանդրութեամբ, չեն դադարում աշխատելուց, մինչև որ հիւանդութիւնը ամենասուր և վտանգաւոր կերպարանք է ստանում, քանի որ նրանք լաւ գիտեն, որ գործը թողնելով՝ պէտք է քաղցամահ լինեն, նրանք գիտեն, որ գործարանից եթէ տուն գնան պառկելու համար, ինչպէս հիւանդ մարդիկ, մի և նոյն է, թէ ուղիղ գերեզման գնան: Այդ պատճառով այն հիւանդը, որը կարող էր մի քանի օր հանգստանալով և բժշկական թեթև միջոցով բոլորովին առողջանալ, հիւանդ դրութեամբ գործարանում շարունակ աշխատելով՝ նրա հիւանդութիւնը զարգանում է և վտանգաւոր կերպարանք է ընդունում....

Վերջացնելով մեր յօդուածը, մենք, իբրև բանւորների վիճակի հետ լաւ ծանօթ, թախանձում ենք ձեռնհաս և բարեմիտ մարդկանց, որ աջակցեն օգտաւէտ առաջարկութիւնը դումային իրագործել տալու: Բանւորների համար հիւանդանոց հիմնելով՝ նշանակում է բանւորներին կեանք պարգևել:

Ս. Ն.

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

«Մշակի» № 94-ի մէջ տպված «Մեր ուսուցչական խմբերը» վերնագրով ընդհանուր յօդուածի առիթով՝ նոյն լրագրի № 100-ի մէջ պ. Տ. Ցովհաննիսեան մի երկար ու ձիգ քարոզաբանութիւն է գրել ճռճռան ֆրազներով լի, որի մէջ ինչի մասին ասես որ չէ փաստաբանում նա, և գրականան ազնուութիւն, և «Մշակի» գաղափար, և թղթակցի պարտականութիւն, և այլն, և այլն: Չենք հասկանում թէ ինչն է դրդել պ. Ցովհաննիսեանցին այդքան վրդովվել, տակն ու վրա լինել մի ընդհանուր յօդուածի առիթով, որի մէջ ոչ քաղաքի, ոչ անհատների և ոչ ժամանակի մասին խօսք կայ: Բաւական անհեռատես պէտք է լինել վերկենալու և ասելու համար թէ «ձեր նկարած պատկերի մէջ ես նկատում եմ իմ ճանաչած մի խումբ երիտասարդների դէմքերը»: Այդ դէմքերը յօդուածի մէջ հրապուրիչ տեսքով չեն ներկայանում, ուրեմն ինչից է ճանաչում որ ակնարկութիւնը իր протеженներին է վերաբերվում, քանի որ նրա ճանաչած մարդիկ մի խումբ երիտասարդներ են, որոնք ազնիւ մարդիկ են, նոր գաղափարներով ոգևորվողներ են» և այլն: Երկուսից մէկը՝ կամ պ. Ցովհաննիսեանի պաշտպանած մարդիկը՝ «Մեր ուսուցչական խմբերը» յօդուածում յիշված յատկութիւնները չունեն և ուրեմն իզուր են տաքանում և կամ եթէ պատկերը ճիշդ է դուրս եկել՝ մենք միանդամայն մեղապարտ չենք, որ միշտ սովորութիւն ենք ունեցել առանց արտայայտութեան ձևը մեղմացնելու՝ երևոյթները իրանց անունով կոչել. փող ուտողին աւազակ ենք կոչել, բարեպատակ կուլիսների եաև իրանց գործերը վարագուրողներին՝ կեղծաւոր փարիսեցիներ: Եւ այդ դէպքում կարելի է ասել պ. Ցովհաննիսեանին— «не пеняй на зеркало, коль рожа крива»: Պ. Ցովհաննիսեան տգեղ է գտնում ընդհանուր յօդուածի մէջ նկատած կէտերը, որոնք յարմար են գալիս իր պաշտպանեալներին, բայց թոյլատրելի է հարցնել արդեօք երբ մի յօդուածագիր այս կամ այն պատճառով չէ կամենում մի ըստ միջէ հրապարակ հանել որ և է քաղաքում գործող կարծվածների թերութիւններն ու իմաստակութիւնները, կարելի՞ է արդեօք, որ նա իր տպաւորութիւնները նկարագրէր ընդհանուր յօդուածի մէջ: Ո՞ւր կերթար եթէ ընդհանուր յօդուածի մէջ յիշէինք, որ աշխարհի մէջ լինում են գողեր, խաղամոլներ և այդ յօդուածի դէմ մարդիկ զայրանային, քարկոծէին, ասելով որ յօդուածագիրը իրանց է ունեցել աչքի առաջ որոշ յօդուածը գրելիս: Պ. Ցովհաննիսեան իր զայրոյթը բացատրում է նրանով, որ իր բարեկամների բնակած քաղաքում բոլորը կը ճանաչեն ակնարկված անձանց, որ յօդուածը այն նպատակով է գրված, որպէս զի գրողը վեր առնէ թերթը՝ խանութից խանութ շրջելով, կարդայ զանազան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՐՕՍՏՕՎԻ ԵՒ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Զկենք մի հայկացք Նոր-Նախիջևանի կեանքի, դպրոցների, և այլ հիմնարկութիւնների վրա, մի քանի խօսք նուիրենք Սուրբ Խաչ Վանքին, քաղաքի շրջակայքում գտնվող գիւղերին և այլն:

Յաւօք սրտի իմ տպաւորութիւնները շատ համակրելի չեն լինելու Նոր-Նախիջևանցիների համար, բայց որն է նկարագրողի գլխաւոր պայմանը, դա անաչառութիւնն է, այդ դրօշակի ներքոյ ես պէտք է պատմեմ այնպէս, ինչպէս տեսել ու լսել եմ, ինչ որ իմ զգայարանքները տուել են:

Նախիջևանի մէջ շատ ամուր արմատներ է ձգել փարթամ ու շռայլ կեանքը, որի մէջ պարունակվում են շատ անբարոյական տարրեր: Այդ շռայլութիւնը և փարթամութիւնը հետևանք է կեղծ քաղաքակրթութեան: Եւ դրան զոհ են գնում ընակիչների բոլոր դասակարգերը: Զարմանալի չէ, որ Ռօստովում ապրող եւրոպացին այդ կարծիքն ունի. ինձ յաճախ է պատահել լսել յիշեալ քաղաքի գերմանացիներից, որ հայերն ըստ իրանց վերմակների չեն մեկնում իրանց ոտները, նրանք աւելի փարթամ, շռայլ են, քան նրանց կարողութիւնը ներում է: Աննախանձելի դրութեան մէջ են գտնվում ընկերական կեանքն և ընտանեկան շրջանը: Այդ վերջիններն անհատին չեն պատճառում հոգեկան գոհացումն: Ընկերական կեանքի կապողը գաղափարը և ոգին չեն, այլ թղթախաղութիւնը ու բամբասանքը: Այստեղ թղթախաղութիւնն ու բամբասանքներն են ստեղծում ընկերական կեանքը: Կուսակցութիւնները խախտում ու չարչարում են ժողովրդի հանգստութիւնը, և չեղում հասարակութիւնը բարեկորգման ճանապարհից: Այս ու այն հասարակական գործը զոհ է գնում կուսակցութիւնների խառնութեան: Կուսակցութիւն ասելով չը պէտք է հասկանալ զանազան գաղափարների կողմնակիցների մի խումբ: Այստեղ չը կան իդէալներ, գաղափարներ: Ահա տեսնում ես մի հարուստ անհատ իր անձնական կրքի համար երևան է գալիս և իր շուրջն է հաւաքում մի խումբ անհատներ և այդ խումբն էլ կրում է կուսակցութիւն անունը: Այդ խումբի անդամները չունեն սեփական կարծիք, հայեացք, նրանց համար լաւ է և բարի է, ինչ որ աղան է ասում: Ինչ վերաբերում է ընտանեկան շրջանին, նա ևս քայքայված է. չը կան սկզբունքներ, արտաքինը փայլում է, իսկ ներքինը անտաշ է: Անկասկած ինչ կրթութիւն կարող է ստանալ նոր սերունդը այդպիսի հանգամանքների ներքոյ: Աւելացրու դրան նաև այն իրողութիւնը, որ նոր-սերունդը շուտով հեռանում է ընտանիքից դէպի Ռօստով կամ ուրիշ քաղաքներ, ուր նա աւելի վատթարանում է, ընկնելով անբարոյական հոսանքի մէջ, նա դառնում է Cavalier դիմակահանդէսների ու բալերի և այլն: Այդ նոր սերնդից է վերջը դառնում Նոր-Նախիջևանի քաղաքային սալօնում անցրած իր պարապմունքներ ունեցող մարդիկը, որոնք նրա առողջ ժամանակ ապառիկ տալիս էին նրան.... Երևակայեցէք. ահա, մի կմախք դարձած, գործարանի ճնշումներից ուժասպառ եղած, ոսկրացած ձեռքերն ու գունատված դէմքը մուրով սևացրած մարդ, գլուխը մի կողմ ծռած, մի ձեռքով բռնած իր նման թշուառ ընկերի ուսից, իսկ միւս ձեռքով պատը չօշափելով՝ թոյլ ոտներով մտնում է իր փոքրիկ, խոնաւ, մութ խրճիթը և տնքալով վայր ընկնում բնակարանի մի կողմում. նրա կինը տեսնելով այդ, լեղապատառ է լինում. նա անմիջապէս զգում է իր գլխի գալիքը... զգում է, որ միւս օրը ամբողջ ընտանիքը քաղցած է մնալու: Կինը իսկոյն դիմում է տնային կոպիտ միջոցների իր մարդուն առողջացնելու համար, սակայն այդ միջոցներով հիւանդն աւելի ծանրանում է, և ահա մի քանի օրից յետոյ հիւանդը անճար է մնացած. նրան բժշկող չը կայ. իսկ քաղաքային հիւանդանոցում կամ տեղ չը կայ, կամ ընդունելու համար երաշխաւորութիւն են պահանջում նրանից՝ հիւանդանոցի որոշված վճարը ստանալու համար: Նա ոչ ուտելու հաց ունի այժմ, ոչ վառելու փայտ. պառկած է մութ ու ցուրտ բնակարանում, չոր անկողնի մէջ, մի պատառոտված կեղտոտ վերմակի տակ, և այդպիսով հիւանդութիւնը, քաղցածութիւնը, ցուրտը ձեռք ձեռքի տուած, միահամուռ ոյժով մարդուն տանում են դէպի գերեզման:

Թող հասկանան մեր բարեսիրտ ձանձաւորները, որ եթէ ուզում են իրանց կեանքում մի բարի գործ կատարած լինել, պէտք է իրագործեն յիշեալ առաջարկութիւնը, գոնէ մի առ ժամանակ հանգստացնելով իրանց միմեանց դէմ լարված կրքերը և մի կողմ թողնելով անձնական խնդիրները: Մենք չենք կարծում, որ մեր նոր դուման կը բոլորէ իր քառամեակը, առանց մի որ և է գործ կատարելու, և եթէ նա զլանում է շատ կիսատ մնացած գործերի ձեռնարկել և վերջացնել, թող գոնէ այս գործում արիութիւն ցոյց տայ:

Բանւորական հիւանդանոցը ֆիզիկական աշխատանքին ենթարկված մարդու համար փրկութիւն կը լինի. բանւորը հիւանդանալուց գոնէ իր պառկելու համար կունենայ մի մաքուր, լուսաւոր, տաք սենեակ, կունենայ տաք կերակուր, բժիշկ, դեղ և այլն. նա այդտեղ կը վերանորոգէ իր սպառված ոյժերը, կենդանութիւն, թարմութիւն կը ստանայ և նորից կը շարունակէ իր աշխատանքը: Բանւորները, այդ ամեն կողմից թշուառ դասակարգի մարդիկ այնքան անապահով են, որ մինչև անգամ իրանց հիւանդացած միջոցին էլ, հիւանդրութեամբ, չեն դադարում աշխատելուց, մինչև որ հիւանդութիւնը ամենասուր և վտանգաւոր կերպարանք է ստանում, քանի որ նրանք լաւ գիտեն, որ գործը թողնելով՝ պէտք է քաղցամահ լինեն, նրանք գիտեն, որ գործարանից եթէ տուն գնան պառկելու համար, ինչպէս հիւանդ մարդիկ, մի և նոյն է, թէ ուղիղ գերեզման գնան: Այդ պատճառով այն հիւանդը, որը կարող էր մի քանի օր հանգստանալով և բժշկական թեթև միջոցով բոլորովին առողջանալ, հիւանդ դրութեամբ գործարանում շարունակ աշխատելով՝ նրա հիւանդութիւնը զարգանում է և վտանգաւոր կերպարանք է ընդունում....

Վերջացնելով մեր յօդուածը, մենք, իբրև բանւորների վիճակի հետ լաւ ծանօթ, թախանձում ենք ձեռնհաս և բարեմիտ մարդկանց, որ աջակցեն օգտաւէտ առաջարկութիւնը դումային իրագործել տալու: Բանւորների համար հիւանդանոց հիմնելով՝ նշանակում է բանւորներին կեանք պարգևել:

Ս. Ն.

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

«Մշակի» № 94-ի մէջ տպված «Մեր ուսուցչական խմբերը» վերնագրով ընդհանուր յօդուածի առիթով՝ նոյն լրագրի № 100-ի մէջ պ. Տ. Ցովհաննիսեան մի երկար ու ձիգ քարոզաբանութիւն է գրել ճռճռան ֆրազներով լի, որի մէջ ինչի մասին ասես որ չէ փաստաբանում նա, և գրականան ազնուութիւն, և «Մշակի» գաղափար, և թղթակցի պարտականութիւն, և այլն, և այլն: Չենք հասկանում թէ ինչն է դրդել պ. Ցովհաննիսեանցին այդքան վրդովվել, տակն ու վրա լինել մի ընդհանուր յօդուածի առիթով, որի մէջ ոչ քաղաքի, ոչ անհատների և ոչ ժամանակի մասին խօսք կայ: Բաւական անհեռատես պէտք է լինել վերկենալու և ասելու համար թէ «ձեր նկարած պատկերի մէջ ես նկատում եմ իմ ճանաչած մի խումբ երիտասարդների դէմքերը»: Այդ դէմքերը յօդուածի մէջ հրապուրիչ տեսքով չեն ներկայանում, ուրեմն ինչից է ճանաչում որ ակնարկութիւնը իր протеженներին է վերաբերվում, քանի որ նրա ճանաչած մարդիկ մի խումբ երիտասարդներ են, որոնք ազնիւ մարդիկ են, նոր գաղափարներով ոգևորվողներ են» և այլն: Երկուսից մէկը՝ կամ պ. Ցովհաննիսեանի պաշտպանած մարդիկը՝ «Մեր ուսուցչական խմբերը» յօդուածում յիշված յատկութիւնները չունեն և ուրեմն իզուր են տաքանում և կամ եթէ պատկերը ճիշդ է դուրս եկել՝ մենք միանդամայն մեղապարտ չենք, որ միշտ սովորութիւն ենք ունեցել առանց արտայայտութեան ձևը մեղմացնելու՝ երևոյթները իրանց անունով կոչել. փող ուտողին աւազակ ենք կոչել, բարեպատակ կուլիսների եաև իրանց գործերը վարագուրողներին՝ կեղծաւոր փարիսեցիներ: Եւ այդ դէպքում կարելի է ասել պ. Ցովհաննիսեանին— «не пеняй на зеркало, коль рожа крива»: Պ. Ցովհաննիսեան տգեղ է գտնում ընդհանուր յօդուածի մէջ նկատած կէտերը, որոնք յարմար են գալիս իր պաշտպանեալներին, բայց թոյլատրելի է հարցնել արդեօք երբ մի յօդուածագիր այս կամ այն պատճառով չէ կամենում մի ըստ միջէ հրապարակ հանել որ և է քաղաքում գործող կարծվածների թերութիւններն ու իմաստակութիւնները, կարելի՞ է արդեօք, որ նա իր տպաւորութիւնները նկարագրէր ընդհանուր յօդուածի մէջ: Ո՞ւր կերթար եթէ ընդհանուր յօդուածի մէջ յիշէինք, որ աշխարհի մէջ լինում են գողեր, խաղամոլներ և այդ յօդուածի դէմ մարդիկ զայրանային, քարկոծէին, ասելով որ յօդուածագիրը իրանց է ունեցել աչքի առաջ որոշ յօդուածը գրելիս: Պ. Ցովհաննիսեան իր զայրոյթը բացատրում է նրանով, որ իր բարեկամների բնակած քաղաքում բոլորը կը ճանաչեն ակնարկված անձանց, որ յօդուածը այն նպատակով է գրված, որպէս զի գրողը վեր առնէ թերթը՝ խանութից խանութ շրջելով, կարդայ զանազան

*) Նախիջևանցին օտար հայերին անուանում է Դանդալաղ, որը ոչքան գիտեմ, նշանակում է մուռել ուտող:

ոտնակոխ է անում ժողովրդի կամ ազգի նահապետական պարզ և բարի սովորութիւնները, այն ժամանակ այդ նահապետական կեանքի արդիւնաբերած բարոյականութիւնը սակաւ առ սակաւ ընկնում է. երբ գոյութեան կռիւն աւելի զօրանում է հողի արդիւնաբերութեան պակասութիւնից և իդական սեռը դուրս է գալիս ընտանեկան շրջանների սահմաններից՝ այդ գոյութեան կռիւն մասնակցելու, այն ժամանակ կրթութեան բացակայութիւնից բարոյական տարրն անհետանում է այդ քնքոյշ սեռի գիտակցութիւնից և նրա տեղ ուրիշ տարրեր են բռնում: Նոր-Նախիջևանցիք թողնելով իրանց հարուստ Շիրակը գաղթել են Կրիմ, որը յիրաւի մի հարուստ երկիր է, բայց չեն մնացել այդ վերջինում և անցել են Նոր-Նախիջևան: Նոր-Նախիջևանցին մոռացել է իր պապերի պարզ սովորութիւնները, բայց չէ ընդունել քաղաքակրթված ժողովրդի աւելի պարզ և բարի սովորութիւնները: Նոր-Նախիջևանի իդական սեռն էլ դուրս է եկել իր ընտանիքի նեղ շրջանից և մասնակցում է գոյութեան կռուին: Ահաւասիկ մենք գտնում ենք հարիւրաւոր հայ օրիորդներ՝ բանւորներ զանազան գործարաններում: Այստեղ կը բերեմ ես մի դէպք, որ տեղի է ունեցել իմ ներկայութեամբ և որը կարող է ապացոյց համարվել իմ ասածներիս: Քանի որ ինձ նպատակ էի դրել ծանօթանալ այդ գաղթականների կեանքին, չէի քաշվում ամենայն տեղ երեւալ և իմ նկատողութիւնները թղթի անցկացնել: Մի գեղեցիկ օր շուշեցի մի երիտասարդի հետ մտայ Նոր-Նախիջևանցիների պանդոկներից մէկը: Սենեակի մի անկիւնում տեղաւորվեցանք մենք.

չարչիների մօտ և «ինքնաբաւական կերպով ձեռքերը չփէ»։ Ողորմելի լոգիկա. ուրեմն պ. Յովհաննիսեան գտնվում է այն մոլորութեան մէջ, թէ ամենքն էլ իր պաշտպանած «ազնիւ» պարոնների նման մարդիկ են, որ մի յօդուածի առիթով ուրախանան, փող հարկանեն, գոռան և գոչեն «լուր, խրայէլ, Տէր Աստուած մեր՝ Տէր մի է»։ Խոստովանվում եմ պ. Յովհաննիսեան, եղել է ժամանակ, որ ես ևս ուրախացել եմ լրագրում իմ յօդուածը տպված տեսնելիս, բայց տարիների փորձը ինձ ապացուցել է, որ դրանք յիմար բաներ են, իսկ այս կամ այն մարդկանց մօտ յօդուած կարդալը խակութեան արգասիք և երեխայութիւն։ Պ. Յովհաննիսեան տարօրինակ դրութեան մէջ է դնում ինքն իրան՝ քանի որ ընդունում է, թէ «Մշակի» № 94-ի մէջ տպված յօդուածը անհասկանալի կը լինէր օտար քաղաքներում և թէ նրան կը հասկանային պարոնի գիտեցած քաղաքում։ Ես կարծում եմ, որ գաւառական թղթակցութիւնները հետաքրքիր կարող են լինել միմիայն օտարաքաղաքացիներին և ոչ այն քաղաքի բնակիչներին, որտեղից գրված է յօդուածը, քանի որ նրանց արդէն ծանօթ է եղելութիւնը այնպիսի մանրամասնութիւններով, որոնք չէին կարող տեղ գտնել մի յօդուածի մէջ։ Ուրեմն յամենայն դէպս, յօդուածագիրը մի նոր բան ասելու կամ ընդհանրացնելու չէր։

Ինչ կը վերաբերի «ժողովրդից ընտրված» հոգաբարձուների իրաւանց պաշտպանութեան հարցին, որն իբրև թէ առիթ է տուել գրելու «Մշակի» № 94-ի յօդուածը, վատաբանելու, ցեխ գցելու «Մշակի» անկեղծ յարգող երիտասարդների վրա, այդ մասին կը խնդրէինք պ. Յովհաննիսեանից որոշ գրել թէ որ հոգաբարձուների մասին է խօսքը, ի՞նչ իրաւունքներ են բռնաբարվել, ովքեր են եղել բռնաբարողները և այդ միշտ նահատակ երիտասարդների գործունէութեան խոչնդոտ հանդիսացողները, և այն ժամանակ յոյս ունենք, որ այդ հարցում մեղադրվողները առիթ կունենան ոչ թէ սոփեստաբանութիւնով լցված յօդուածներ գրել, այլ գործի բուն եղելութիւնը նկարագրել ընթերցող հասարակութեանը՝ հիմնվելով պաշտօնական փաստերի վրա։ Այդ նկարագրութեան մէջ գուցէ պարզվի և այն, որ պ. Յովհաննիսեան բոլորովին կողմնակի (իմա չէզոք) մարդ չէ, ինչպէս նա աշխատում է ապացուցանել իր յօդուածին աւելի ոյժ տալու համար, այլ ունեցել է և իր յատուկ փորձաւը։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բագու, 13 հոկտեմբերի

Խմբովս հանդերձ հրաւէր ստացած լինելով Ռուսաստանի և արտասահմանի զանազան քաղաքներում հայկական երեկոյթներ տալու՝ արդէն սկսել եմ նախապատրաստվել։ Բայց որպէս զի նախապատրաստութիւնը լինի բաղմակողմանի և նպատակայարմար, դիմում եմ մամուլի աջակցութեան և ձեռնհաս անձանց ամենակերպ օժանդակութեան։

Յուսով եմ, որ բանիմաց և ձեռնհաս մարդիկ չեն մերժի իրանց աջակցութիւնը, այդ պատճառով էլ շտապում եմ մի քանի տեղեկութիւններ հաղորդել երաժշտական այդ ուղևորութեանս մասին։

ա) Խումբը պէտք է բաղկացած լինի 40—50 երկսեռ անդամներից, որոնք կընտրվեն համապատասխան իրանց առաւելութիւնների՝ ձայնի, կրթութեան և այլն և այլն։

բ) Երգերի բէպերտուարը պէտք է կազմված լինի զուտ արևելեան եղանակներով. մաղթանքներից, ազգային, քնարերգական և ժողովրդական երգերից։

գ) Խմբի անդամները կունենան երգերի համապատասխան զանազան հանդերձներ՝ պատմական, ժողովրդական և կովկասեան։

Շատ կը պարտաւորեցնեն մեզ ժողովրդի մարդիկ, եթէ չուտով հաղորդեն արևելեան եղանակներով երգեր—հայկական, կամ եւրոպական նոտաներով և կամ բերանացի։ Բացի սրանից, կարևոր է նաև՝ թէ ինչ երգ ինչպիսի ժամանակ, կամ ինչ տրամադրութեան մէջ է երգում ժողովուրդը և կամ ինչ աւանդական և պատմական բացատրութիւն է տալիս այդ երգերին։

Հանդերձների մասին ևս ուրախութեամբ կընդունեմ զանազան խորհուրդներ և տեղեկութիւններ։

Ինչ վերաբերում է ուղևորութեանս պայմաններին՝ վերջնականապէս դեռ չէ որոշված. այդ մասին իր ժամանակին կը յայտարարվի։

Ուղևորութեանս մասնակից ցանկացող արանց և մանաւանդ կանանց խնդրում եմ գրաւոր կերպով դիմել ինձ հետևեալ հասցէով. Баку, Шемахинская улица, д. № 1221, անձամբ—Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան Նախկին ուսումնարանի երգեցողութեան դահլիճը՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը, երեկոյեան ժամը 7—9, իսկ կիրակի առաւօտեան ժամը 12—2.

Ընդունեցէք և այլն. Խ. Կարա-Մուրզա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հինգշաբթի, հոկտեմբերի 17-ին, Թագաւոր կայսրի, Թագուհի կայսրուհու և Թագաւորական ընտանիքի վտանգից հրաշալի փրկութեան օրը՝ կատարվեցան թէ Սիոնի ուղղափառ մայր-եկեղեցում և թէ հայոց Վանքի մայր-եկեղեցում գոհացողական մաղթանքներ։ Առաւօտից արդէն քաղաքի բոլոր փողոցները զարդարված էին դրօշակներով, իսկ երեկոյեան քաղաքը լուսաւորված էր։

—

Հինգշաբթի, հոկտեմբերի 17-ին, հայ դերասանական մշտական խումբը Թիֆլիսի աղնուականների բանկի թատրոնում ներկայացրեց Ֆրանսերէնից թարգմանված «Պարիզի աղքատներ» դրաման, 5 գործողութեամբ։ Ներկայացումից առաջ, Թագաւոր Կայսրին և Օգոստափառ ընտանիքին սպառնող վտանգից ազատվելու առիթով ամբողջ դերասանական խումբը երգեց «Տէր, պահեա զկայսրն մեր» օրհներգը, որը ամբողջ հասարակութիւնը ոտի վրա կանգնած լսեց և որը բուռն ծափահարութիւններով ծածկվեց։ Գալով դրամային, աւելորդ չենք համարում յիշեցնել հասարակութեանը, որ տարիներ առաջ, երբ Կ. Պոլսից առաջին անգամ մեզ մօտ հրաւիրվեցան պոլսեցի դերասաններ և դերասանուհիներ, նրանք իրանց հետ բերին Ֆրանսիական հնացած և եւրոպական բեմերից արտաքսված մելոդրամների մի բէպերտուար, և սկսեցին Թիֆլիսի հայ բեմի վրա ներկայացնել նրանց։ Այն ժամանակն ևս հայ մամուլը խիստ կերպով բողոքեց և պահանջեց արտաքսել հայ բեմից այդ անմիտ պիէսաները, և մասամբ հասաւ իր նպատակին։ Ահա անցեալից մնացած ժառանգութիւն է և «Պարիզի աղքատներ» դրաման։ Անկարելի է երևակայել մի աւելի անմիտ և անկապ դրուածք։ Այդ մելոդրամի մէջ, կարծես կալեյդոսկոպի պէս, անցնում են հանդիսատեսի աչքի առջև ցնտոտիներ հագած աղքատներ, զրպանում մի գրօշ չունեցող կոմսեր, արհեստաւորներ, աղքատացած կանայք և տղամարդիկ, գողութեամբ հարստացած անձնաւորութիւններ, որոնց գործողութիւնների մէջ ոչինչ ներքին կապ չը կայ, այլ հեղինակը մի կերպ կապել, կարկատել, արուեստական կերպով միացրել է այդ բոլորին։ Չորրորդ գործողութիւնից յետոյ հասարակութեան մեծ մասը տուն գնալ պատրաստվեց, կարծելով թէ ներկայացումը վերջացել է։ Իսկ մենք կասենք, որ «Պարիզի աղքատներ» դրաման այնքան անմիտ դրուածք է, որ ոչ միայն չորրորդ գործողութիւնից յետոյ, այլ կարելի էր գնալ և երկրորդ և երրորդ գործողութիւններից յետոյ, և հանդիսատեսը ոչինչ չէր կորցնի։ Խօսելով դերասանների և դերասանուհիների խաղի մասին, պէտք է ասել, որ նրանք բոլորն ամեն կերպ աշխատում էին նպաստել ներկայացման աջողութեանը. բայց նրանք, ինչքան էլ լաւ խաղային, հօ չէին կարող անմիտ և անկապ մելոդրամը մի առաջնակարգ դրուածք դարձնել։ Խորհուրդ ենք տալիս թատրոնական մանեժողովին, գնահատել մեծ թիով թատրոն յաճախող հայ հասարակութեան ուշադրութիւնը, և այլ ևս չը ներկայացնել հայ բեմի վրա վերոյիշեալ մելոդրամների նման հոգուն և մտքին ոչինչ չը տուող պիէսաներ։ Թատրոնը լի էր։

—

Հինգշաբթի, 17-ին հոկտեմբերի, Թիֆլիսի քաղաքային թատրոնում, ռուսաց ներկայացման սկզբում՝ ռուսաց դրամատիական ամբողջ խումբը կատարեց «Боже царя храни» օրհներգը։

—

Վաղը, կիրակի, հոկտեմբերի 20-ին, Թիֆլիսի աղնուականների Բանկի թատրոնում հայ դերասանական խումբը կը ներկայացնէ «Քոյր Թերէզա» դրաման, 5 գործողութեամբ, թարգմանութիւն Աւալեանի։ Սկիզբը $7^1/_2$ ժամին երեկոյեան։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ, որպէս լսել է «Новости» լրագիրը, ներկայումս հարց է յարուցված բանալ Կովկասում տեխնիական միջնակարգ դպրոց գիւղատնտեսական և լեռնային բաժիններով։

—

Մենք լսում ենք, որ պ. Մ. Նաւասարդեանց արդէն թարգմանում է Ֆրանսերէնից յայտնի հեղինակ Էրկման-Շատրիանի գրուածներից «Ֆրից բաբեկամը» (L'ami Fritz) երեք արարուածից բաղկացած կատակերգութիւնը, որը շուտով լոյս կը տեսնի առանձին գրքոյկով։

—

Պ. Աբել Ապրեսեանց, Բաթումից, խնդրում է մեզ յայտնել հետևեալը. «Իմ հրատարակած Վ. Փափազեանի «Պատկերներ թիւրքաց Հայաստանից» գրքոյկները արդէն ստացվել են և ուղարկվել բոլոր պահանջողներին։ Թիֆլիսում գիրքը ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում 1 ր. 25 կ., իսկ ուրիշ քաղաքներում 1 ր. 50 կոպ.»։

—

Պ. Մկրտիչ Կարա-Մուրզա խնդրում է մեզ տպել հետևեալը. «Ձեր պատուական լրագրի միջոցով խնդրեմ յայտնէք ի գիտութիւն թարգմանիչների, որ ես արդէն թարգմանել եմ ռուսերէնի Բաֆֆիի «Խենթ» և «Ոսկի Աքաղաղ» հեղինակութիւնները, որոնցից առաջինը քանի մի ժամանակից կուղարկվի տպագրելու մայրաքաղաքում լոյս տեսնող մի ամսագրում։»

—

Պետերբուրգից մեզ հաղորդում են. «Երաժշտական աշխարհի ապագայ աստղերից մինն էլ լինում է Պետերբուրգի բարձրագոյն երաժշտական դպրոցի (консерваторія) ուսանող, ջութակահար Յովհաննէս Նալբանդեանց (ղրիմցի հայ-կաթոլիկ) որը մեծ աջողութիւն ունեցաւ իր խաղով անցեալ տարի Պետերբուրգի ուսանողներից տրված կովկասեան երեկոյթին։ Նաև վերջին քննութեան ժամանակ արժանացաւ աշխարհահռչակ Ռուբինշտեյնի կողմից գովասանքների։ Նրա ուսուցչի պրոֆէսոր Աուէրի ու նրա տաղանդը յարգող շատ ուրիշ երաժիշտների ասելով՝ Նալբանդեանց արտագոյ կարգի տաղանդ է, որն ապագայում ունենալու է մեծ հռչակ։ Անցեալ ամառ Նալբանդեանց անկիւնն էի ընտրել, որպէս զի աւելի ազատ դիտելի յաճախողներին։ Տրակտիրի երաժշտութիւնը իր ամբողջ ոյժով դղրդացնում էր պանդոկը։ Սակաւ առ սակաւ սկսեցին յաճախողները բաղմանալ. մեր սեղանից փոքր ինչ հեռու տեղ բռնեցին մի քանի ռուս կանայք, որոնք խօսում էին հայերէն, մի քանի բօպէից յետոյ մօտեցան դրանց երկու հայ երիտասարդներ, որոնք թէյ ու օղի պատուիրեցին։ Սակայն մեր ուշադրութիւնը մի այլ բան գրաւեց. սենեակ մտան երկու այլ օրիորդներ, սևահեր ու սև սաթի պէս փայլուն աչքերով, որոնք նոյնպէս հայերէն էին խօսում, բայց ռուս չէին. դրանց մօտեցան մի քանի ռուս երիտասարդներ և սկսվեց քէֆը, օղին չուտով ոգևորեց նրանց և օրիորդների դէմքի քողը բացվեց։ Դրանք հայուհիներ էին։ Ես չեմ ուզում ապացուցել, որ այս դէպքը բացառութիւն չէ, որը Եւրոպայի մէջ մի սովորական բան է. գուցէ և մենք, Կովկասի բնակիչներս ժամանակին զանազան կենսական պայմաններից ստիպված մեր մէջ ստեղծենք այդ կեանքը, սակայն սկիզբ դնողը նոր-նախիջևանցիք են։

Այս կարճառօտ ակնարկներից յետոյ ձգենք մի հայեացք Նոր-Նախիջևանի դպրոցական հիմնարկութիւնների վրա։ Նոր-Նախիջևանի դպրոցներն են. 1) Բեսարաբիայի և Նոր-Նախիջևանի թեմական հոգևոր դպրանոցը. 2) Արհեստաւոյց-ծխական դպրոց. 3) երեք ծխական դպրոցներ՝ ս. Թորոսի, ս. Համբարձման և ս. Նիկողայոսի անուններով։ Գոգոյեան օրիորդաց դպրոց, Հռիփսիմեան վարժարան, որի շինութեան համար պ. Միխ. Փոչոբակութեան մէջ մի աղգային դպրոցի անհրաժեշտութեան նշանակութիւնը։ Եւ երբ քաղաքիս հասարակութիւնը իմացաւ 1871 թվի Բարձրագոյն հրամանը, որ Խալիպեան ուսումնարանը փոխարկվի թեմական դպրանոցի և նրա մեծածախս շինութիւնը յատկացվի վերոյիշեալի համար, այն ժամանակ Նոր-Նախիջևանի հասարակութիւնը դիմեց խնդիրքով կաթողիկոսին այդ թեմական դպրոցը փոխադրելու Նոր-Նախիջևան, և 1875 թվին սրբազան Աղափիրեանի ձեռքով բացվեց դպրոցը, որը մինչև այսօր շարունակվում է։ 1880 թվին հաստատվեց հոգևոր իշխանութիւնից որպէս թեմական դպրոց։ Ինչ ասել կուզի, որ հասարակութիւնը մտածեց նոյնպէս դպրոցի ապահովութեան մասին։ Խալիպեան ուսումնարանի 1500 ռուբլի եկամուտով, Նախիջևանի եկեղեցիների 1600 ռուբլի մուտքով և աշակերտների թոշակներով սկսեց կառավարվել։ Ուսումնարանը ստացաւ նաև նուէրներ՝ ինչպէս օրինակ. Դեազքովեանից հարիւր հազար ռուբլի, պ. բժիշկ Գ. Տիգրանեանից 3000 ռուբլի և այլն։ Դպրանոցի նպատակը կանոնադրութեան մէջ հետևեալ կերպով է ձևակերպված. «Դպրանոց վիճակին հայոց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ է միջնակարգ հոգևոր ուսումնական հաստատութիւն վասն պատրաստելոյ զմանկունս հայոց ի հոգևոր կոչումն և ի վարումն ուսուցչական պարտաւորութեանց յեկեղեցական դպրոցս հայոց։»

Դպրոցը բաղկացած է վեց դասարաններից և ուսանվում են հետևեալ գիտութիւնները.

1) Սրբազան պատմութիւն և հրամանք քրիստոնէական հաւատոյ։

2) Աստուածաբանութիւն կրօնական, բարոյական և հովուական։

3) Տօմարագիտութիւն և եկեղեցական ժամկարգութիւն։

4) Կանոնական գիտութիւններ։

5) Պատմութիւն հայոց եկեղեցւոյ։

6) Տրամաբանութիւն, հոգեբանութիւն և կավարժութիւն։

7) Ընդհանուր եկեղեցական պատմութիւն

8) Ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն։

9) Պատմութիւն և աշխարհագրութիւն Ռուսաստանի։

10) Պատմութիւն և աշխարհագրութիւն Հայաստանի։

11) Հայոց լեզու հանդերձ պատմութեամբ մատենագրութեան։

12) Ռուսաց լեզու հանդերձ պատմութեամբ մատենագրութեան։

13) Լատին լեզու։

14) Գաղիերէն լեզու։

15) Թուաբանութիւն, բնագիտութիւն և ընդհանուր տիեզերագրութեան։

16) Բնական պատմութիւն։

17) Եկեղեցական երաժշտութիւն ձայնագրութեամբ։

18) Գծագրութիւն և նկարչութիւն։

(Կը շարունակվի)

դեանց տուեց երկու նուագահանդէս Սեվաստոպոլում ու Թէոդոսիայում՝ հռչակաւոր նկարիչ Այվազովսկու տանը: Նրան Նալբանդեանցի մասին պատմել էր ինքը Ռուբինշտէյն, երբ սա այցելեց Այվազովսկուն Կովկասից վերադառնալիս: Այվազովսկու տանը տրված նուագահանդէսին, ուր ի միջի այլոց ներկայ էին Սուվորին և Խերսոնի նահանգապետը, մեծ աշողութիւն ունեցաւ Նալբանդեանց: Նա էրնստի յայտնի էլեգիան այնպիսի զգացմունքով ու կատարելութեամբ ածեց, որ ունկնդիրների վրա շատ խոր տպաւորութիւն թողեց. ինքը Նալբանդեանց, լինելով ջղային ու սաստիկ զգայուն բնաւորութեամբ, էլեգիան վերջանալուց յետոյ ուշաթափ եղաւ, իսկ ներկայ եղող տիկիններից մի քանիսի հետ պատահեց իստերիկա: Նալբանդեանց այժմ տասն ու ինն տարեկան է: Մի տարուց յետոյ կաւարտի դասընթացը կօնսէրվատորիայում, կը տայ մի քանի նուագահանդէսներ Ռուսաստանի այլ և այլ քաղաքներում, և ապա կուղևորվի արտասահման, տէրութեան հաշուով կատարելագործվելու համար: Նալբանդեանց խոստացաւ նաև լինել մեզ մօտ Կովկասում 1892 թուի ապրիլին կամ սեպտեմբերին: Կը սպասենք երիտասարդ հիւրին:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՑԻՑ

— Վիէննա, 16 հոկտեմբերի

Հոկտեմբեր 12-ին տօնեց համայն Գերմանիան, ինչպէս քաղաքակիրթ աշխարհն առհասարակ, Ռուդոլֆ Վիրխովի ծննդեանամեակը: Այս անձի գործունէութիւնը, իբրև գիտուն, կայանալով ընդհանուր մարդկութիւնը շահագրգռող հարցերու հետազօտութեան մէջ, կարժէ ծանօթացնել զնա մի քանի կարճ գծերով հայ ժողովրդի հետ:

Վիրխով ծնաւ ի հիւսիսային Գերմանիա: Իր հօրէն կանխապէս սահմանված փիլիսոփայութիւն սովրելու, նուիրեց զինքն բնական և բժշկական գիտութեանց, մղվելով իր քննասէր և հետազօտող ոգիէն: 22 տարեկան հասակին մէջ, ստացաւ դոկտորի աստիճան և դարձաւ օգնական Ֆրորիպ անատոմին, որ կը դասախօսէր այն ժամանակ Շարիտէ հիւանդանոցին մէջ ի Բէրլին: Իր ապագայ հետազօտութեանց մեծ դրդիռ տուին Եօհաննէս Միւլլերի դասախօսութիւնները բնախօսութեան և անդամալնութեան վրա և պէտք է նկատել, թէ սակաւերին վիճակուած է մի դասախօսի ունենալ փառքն թուելու իւր աշակերտաց մէջ այնպիսի մեծութիւններ, որպէս են Վիրխով, Հէլմհոլց, Բրիւկէ, Դիւբուա-Ռեյմոնդ: Մինչդեռ Հէլմհոլց շատ տեսական փիլիսոփայական աշխատութիւններով զբաղեցաւ, որք կը կենտրոնանան ակուստիկի և օպտիկի վրա, և Բրիւկէ և Դիւբուա-Ռեյմոնդ ըրին բնախօսութիւնը իրանց ուսումնասիրութեան գրեթէ միայնակ առարկան, Վիրխով պարզեց մի բազմակողմանի աշխատութիւն, որ ընդգրկեալ յետոյ բնական գիտութեանց գրեթէ ամեն ճիւղերն և տալէ յետոյ նոցա մի նոր ուղղութիւն, մասնակցեցաւ նաև իր հայրենիքի քաղաքական գործերուն:

Վիրխով կը ներկայանայ մեզ հետևաբար իբրև գիտուն և իբրև հանրային մարդ:

Իբրև գիտուն կը ներկայացնէ, ինչպէս ըսաւ մի ծանօթ վերաբոյժ, ժամանակամիջոցն Բոքիտանսքիի և Բօբէր Քոխի մէջև. միկրոսկոպիկ ժամանակամիջոցն է այդ յորում Վիրխով անընդհատ կը համարի Բոքիտանսքիի եղանակն՝ միայն արտաքին փոփոխութիւններէ դատելու հիւանդութեան բնութիւնը և կը յանձնարարէ քննել միկրոսկոպի միջոցաւ հիւանդացեալ գործարանին տարրերն, որք են բջիջներն, cellular: Հիմնվելով իւր աշխատութեանց վրա, որոնց նպատակն էր ծանօթանալ բջիջներու բնութեան և կեանքին հետ, հասաւ սա եզրակացութեան, թէ մի գործարանի հիւանդութիւնը հետևութիւնն է զայն կազմող բջիջներու հիւանդութեան և պարզեց իւր այս տեսութիւնը մի յոյժ շահեկան գործի մէջ, որ կը կրէ cellular—Theorie անունն: Այս գործին հետևեցան. I Thrombose und Embolie. II. Die lehre von der Entründung և III. Die lehre von den Geschwülsten հսկայ աշխատութիւններ, յորս յեղաշրջեց բժշկական գիտութիւնը և որպէս ի նորոյ քերթեց զայն:

Վիրխով ճանապարհորդած է սուէջ կատարելու համար ցեղագրական ուսումնասիրութիւններ: Անշուշտ շատեր կը յիշեն, թէ երբ նա կը զբաղվեր ի Կովկաս, ուսումնասիրեց նաև հայ ցեղը, մասնաւորապէս հետաքրքրվելով հայ կեանքի կազմութեան: Հայ երիտասարդներ հիւրասիրեցին Վիրխով ի Թէֆլիս, ուստի մեկնեցաւ նպաստաւոր տպաւորութեան տակ հայերուն մտաւորական կարողութիւններու մասին:

Իբրև հանրային մարդ, ունի Վիրխով խորհրդարանական ընդարձակ գործունէութիւն: Նա անդամ է պրուսական լանդտագի և գերմանական բայխստագի և կը վերաբերի այս վերջինին մէջ ազատական կուսակցութեան: Բիսմարկի զօրաւոր հակառակորդներէն մին եղած է և քանիցս լսելի ըրաւ իր ձայնը խորհրդարանին մէջ ընդդէմ գաղթային արտակարգ ոգևորութեան, որ մի պահ տիրեց ի Գերմանիա: Քննելով հարցը գիտական տեսակէտով, դիտել տուաւ, թէ ափրիկեան կլիմայն աննպաստ է եւրոպական տարրին հաստատման յԱֆրիկէ և զգուշացուց գերման ժողովուրդը գաղթային անխոհեմ ձեռնարկներու առջև սև աշխարհին մէջ: Վիրխով չէ մի փայլուն խօսող, սակայն ի փոխարէն կը միացնէ անսպառ քննադատութիւնը նիւթին խորին ուսումնասիրութեան հետ, երկու յատկութիւններ, որք կուտան իր տեսութիւններուն մի մեծ կշիռ և յարգելի կընծայեն զինքն թէ իւր խօսակիցներու և թէ հակառակորդներու:

Վիրխովի մեծ ոգևոյն ապացոյցն է այն հաստատութիւնը, որ կը կրէ իր անունը և որ հիմնված է մի կարևոր դրամագլուխի վրա, որոյ տարեկան տոկոսներէն կը նպաստուին աղքատ և արժանաւոր ուսանողներ և կը վարձատրվին բժշկական գիտութեան մէջ կատարված նոր և կարևոր գիւտեր: Այդ հաստատութիւնն հիմնեց Վիրխով իր անձնական կարողութիւնէն, որչափ կը յիշեմ, երբ տասն տարիներ յառաջ կը տօնուէր իր վեթասունամեակը:

Ներկայելէ յետոյ հայ ժողովուրդին Վիրխովի անսովոր անձնաւորութիւնը այս համառօտ գրուածի մէջ, ի սրտէ մաղթելի է, որ նա ապրի դեռ տարիներու մի երկար շարք և զործէ այն եռանդով ի յառաջադիմութիւն գիտութեան և յօգուտ մարդկութեան:

Մ. Վ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վատիկանի և Ֆրանսիայի դէմ Հռոմում արած ցոյցերի առիթով մեծ պետութիւններին պապի ուղարկած բողոքում մատնացոյց է անվում այն բանի վրա, որ դէպի Հռոմ ուխտագնացութիւնը արգելելով, ամբողջ կաթոլիկ աշխարհը կը կտրվի պապական գահից:

—Կ. Պոլսի ֆրանսիական նոր դեսպան Կամբոն չափազանց սիրալիր կերպով ընդունվեց սուլթանի մօտ: Ցոյց տալու համար, թէ ինքն որպիսի յարգանքով է վերաբերվում ֆրանսիական կառավարութեանը, սուլթանը հրամայեց «Մարսէլիէզ» ածել այն ժամանակ, երբ ֆրանսիական դեսպանը մտնում էր ունկնդրութեան դահլիճը:

—Էրֆուրտում այժմ բացվել են սոցիալ-դէմոկրատների կուսակցութեան կոնգրէսի նիստերը: Վերոյիշեալ կուսակցութեան գործելու եղանակի մասին խօսելով, Բէբէլ ասեց. «Սոցիալական կուսակցութիւնը, նախ քան սոցիալական վերանորոգութիւններին ձեռք զարկելը, պէտք է աշխատէ քաղաքական իշխանութիւն ձեռք բերել: Նրա պրոպագանդայի գլխաւոր զէնքերը պէտք է լինեն՝ հրապարակական ժողովները, մամուլը, բէյխստագում արտասանած ճառերը:» Բէբէլի խօսքերով, անարխիստները յետադիմականների օգտին են գործում, երբ աշխատում են սոցիալ-դէմոկրատներին բռնի յեղափոխութեան կողմնակիցներ ցոյց տալ: «Այդպիսի յեղափոխութիւնը անհնարին է,—ասեց Բէբէլ, որովհետև ժամանակակից զէնքով մինչև անգամ 100,000 ապստամբներին ճնճղուկների նման կարելի կը լինի կոտորել:»

—Գերմանացի յայտնի գիտնական Հէլմհոլց իսկական գաղտնի խորհրդականի աստիճան է ստացել: Շնորհելով հռչակաւոր գիտնականին այդ բարձր աստիճանը, գերմանական կայսրը, պաշտօնական լրագրում տպած մի հեռագրով բացատրեց, թէ Հէլմհոլց արժանացել է այդ բարձր աստիճանին այն պատճառով, որ գիտնականը ամենևին չէր խառնվում քաղաքականութեան մէջ: Բանից դուրս է գալիս ուրեմն, որ Հէլմհոլց վարձատրվում է ոչ թէ իր գիտնական մեծ ծառայութիւնների համար, այլ իր քաղաքական անտարբերութեան համար, և հասկանալի է դառնում թէ ինչու չարժանացաւ նոյնանման պարգևին գերմանացի մի ուրիշ ոչ պակաս հռչակաւոր գիտնական՝ Վիրխով: Ցայտնի է, որ Վիլհէլմ կայսրը ամենևին չը մասնակցեց Բերլինում նորերս տեղի ունեցած Վիրխովի յոբելեանին, որին մասնակցեց ոչ միայն ամբողջ Գերմանիան, այլ և ամբողջ մտածող աշխարհը: Վիրխով, որպէս յայտնի է, մասնակցում է իր հայրենիքի քաղաքական գործերին և գերմանական պրոգրէսիստների գործունեայ անդամներից մէկն է համարվում: Այդպիսով կայսրը կարծես կամեցել է զովել մեծ գիտնական Հէլմհոլցին, և պախարակել միւս մեծ գիտնական՝ Վիրխովին:

—«Times» լրագրի Վիէննայի թղթակիցը հաղորդում է, որ ռուսաց կառավարութիւնը անհրաժեշտ համարեց ռուսական հիւպատոսութիւնների թիւն աւելացնել արևելեան Եւրոպայում: Սերբիայում չորս նոր հիւպատոսներ կը նշանակվեն, Ռումինիայում—վեց, Թիւրքիայում—տաս և Յունաստանում—հինգ: Որովհետև առևտրական պահանջների հետևանք չէ ռուս հիւպատոսների թիւի աւելացնելը, այդ պատճառով Վիէննայում կարծում են, որ այդ կարգադրութիւնը պայմանաւորվում է քաղաքական նկատումներով:

—Հռոմից «Pol. Corr.» լրագրին հեռագրում են, որ այնտեղի պալատական շրջաններում Ումբերտո թագաւորի Անգլիա գնալն արդէն վճռված գործ է համարվում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Врачъ» շաբաթաթերթը, կրայտոն Բրոուն անգլիական պրոֆէսորի խօսքերի վրա հիմնվելով, մարդկային առողջութեան վերաբերեալ բաւական տխուր փաստեր է հաղորդում: Պրոֆէսորի կարծիքով, «ցաւալի սխալ» է կարծել, որ մահկանացութիւնը պակասելով, կաւելանայ կեանքի տևողութիւնը. քաղաքակրթութեան զարգացմամբ մարդկային կեանքը կարճանում է և ոչ թէ երկարանում: Պակասեց մանուկների մահացութիւնը, և ոչ թէ հասակաւորներինը, մանաւանդ քառասուն տարեկան հասակին հասած անձանցը: Նրանց այժմ ուղղակի կանխահաս ծերութիւն է սպառնում, ասում է պրոֆէսորը: Սրտի հիւանդութիւնները ծագում են գլխաւորապէս կենսական անաջողութիւնների և գոյութեան կռիւ պատճառով. կրած յուզմունքները առաջացնում են սրտի և անօթների ծերութիւն: Ջղային հիւանդութիւնները նոյնպէս կախում ունեն ջղային սիստեմի չափազանց յոգնեցնելուց, որը արագապէս ծերանում է: Թուանչաններից երևում է, որ այդպէս վաղահաս ծերանալու պատճառը քաղաքային կեանքն է: Անգլիայում, գիւղերում մարդկանց կրկնակի թիւը հասնում է 65 տարեկանից բարձր հասակին, քան քաղաքներում: Բացի վերոյիշեալ փաստերից կան և ուրիշները, որոնք ցոյց են տալիս, որ մարդիկ կանխահաս են ծերանում: Ծերութեան անդորութիւնը սկսում է աւելի վաղ է երևալ: Անգլիայում ծերութեան նշաններն երևում են արդէն 45 տարեկան հասակում, այն ինչ առաջ նա երևում էր միայն 50 ամեայ հասակում: Ատամներն աւելի վաղ են ընկնում: Ճաղատութիւնը նոյնպէս շատ վաղ է սկսվում: Ծերութիւնից առաջացած խելագարութիւնը այժմ աւելի յաճախ է պատահում, և դրա հետ միասին աւելանում է անձնասպանութիւնների թիւը 45-ամեայ հասակից յետոյ: Ծերական մելամաղձոտութիւնը բաւական քիչ թանչաններ է տալիս, որովհետև մելամաղձոտներից շատերը չեն բժշկվում, սակայն քիչ չեն և մելամաղձոտները, որոնք մեռնում են այդ հիւանդութիւնից: Այդ կանխահաս ծերութիւնը անագին վնաս է հասցնում մարդկութեանը, որովհետև այն ժամանակն է հարուածում մարդուն, երբ նրա այժերը կատարելապէս դեռ չեն զարգացել: Մարդկային կարողութիւնների կատարեալ զարգացումը աւելի ուշ է հասնում, քան թէ կարծում են: Բանուորների վրա արած դիտողութիւնները ցոյց են տալիս, որ մկանունքների կատարեալ զարգացումը 30 տարեկան հասակից վաղ չէ կատարվում: Հեռաւորական ընդունակութիւնների զարգանալն ևս աւելի ուշ է վերջանում, այն է 45 տարեկան հասակից յետոյ: Դրան ապացոյց կարող է լինել այն, որ մեծ հռետորները իրանց ճառերը հեղինակում էին սովորաբար այդ հասակից յետոյ:

* * *

Նէապոլում այս օրերս տեղի ունեցաւ իտալական հաղորդակցութեան ճանապարհների նոր մինիստր Բրանկի հարսանիքը: Այդ «հետաքրքիր հարսանիքը» իտալական առաջին մինիստր դի-Ռուդինիի դիպլոմատիական առաջին յաղթութիւններից մէկն էր: Բանը նրանումն է, որ այժմեան մինիստր Բրանկ վաղուց արդէն սիրահարված էր մի գեղեցիկ և հարուստ իտալուհու վրա, Աննա Կարրացիօլո-Ֆարինո աղգանունով, որը, սակայն, վճռապէս յայտարարեց, որ Բրանկի կին կը դառնայ միայն այն ժամանակ, երբ նա մինիստր կը դառնայ: Մի այդպիսի որոշումից յետոյ, Բրանկ ամեն միջոցներ գործ էր դնում, որ իր վրա ուշադրութիւն դարձնեն և վաղ թէ ուշ մինիստրի պաշտօն ստանայ: Բրանկի բաղդը բանեց: Կրիսպիի տեղ, որը ամենևին ուշադրութիւն չէր դարձնում մինիստրի պաշտօնին ձգտող երիտասարդ կանդիդատի վրա, մինիստր-նախագահ նշանակվեց դի-Ռուդինի, Բրանկի վաղուցվայ բարեկամը, որը չտապեց նշանակել նրան հաղորդակցութեան ճանապարհների մինիստր, և դրանով զրդեց օրիորդ Կարրացիօլո-Ֆարինոին տալ իր սիրտը և ձեռքը երիտասարդ ինժենէրին: Բացի դրանից, դի-Ռուդինի մինչև անգամ նորապսակների խաչեղբայր դարձաւ:

* * *

Աւստրիական կայսրուհին, որը հանճարաւոր բանաստեղծ Հէնրիխ Հէյնէի մոլեռանդ երկրպագուներից մէկն է, իր նոր պալատի այգիում, կօրֆու կղզու վրա, իր սիրելի բանաստեղծի արձանը կանգնեցնել տուեց: Հէյնէ ներկայացրած է իր կեանքի վերջին տարիներում, մահճակալի վրա պառկած: Իր պալատի սենեակներից մէկին «Հէնրիխ Հէյնէի սենեակ» անունը տուեց: Այդ սենեակում ժողովված են բանաստեղծի պատկերները, նրա գերեզմանից վերցրած ծաղիկներ, այն տան տեսարանները, որտեղ նա ծնվել է, մի քանի ձեռագիրներ, և նոյնպէս մի փոքրիկ գրադարան, որը բաղկացած է Հէյնէի բանաստեղծութեան վերաբերեալ հեղինակութիւնների և զրքերի զանազան հրատարակութիւններից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 16 հոկտեմբերի: Գործող զօրքի մէջ ծառայութեան երկամեայ ժամանակամիջոցի յարմարութեան վերաբերմամբ, պատերազմական մինիստրութիւնը բոլոր զօրաբաժինների հրամանատարներին հարցմունքներ ուղղեց, որոնց մի քանիսը նպաստաւոր և դրական մտքով պատասխանեցին, իսկ մի քանիսը անպաստ: Այժմ դրական պատասխան տուող հրամանատարներին առաջարկված է ծառայութեան երկամեայ ժամանակամիջոց ունեցող փորձնական զօրաբաժիններ կազմակերպել. այդպիսի զօրաբաժինների կազմակերպութեանը ձեռք կը զարկեն նոյեմբերին, երբ նորակոչ զինուորները կը դան: Կառավարութիւնը գործի դրութեան մասին Բէյխստագին հաշիւ կը ներկայացնէ:—Հրատարակված է պրուսական մինիստրութեանն ուղղած կայսրի հրամանը, որը պահանջում է եռանդով կռուել անառակութիւնից օգուտ քաղող խաբեբայութեան դէմ. բարձրագոյն հովանաւորութիւն է խոստացված գործ դրվելի եռանդոտ միջոցներին. թոյլ է տրվում այժմ գործադրվող դատավարութեան փոփոխութիւնը, որպէս զի պաշտպանները չը կարողանան զանազան դատարկ միջոցներով նպաստել անարդարութեան յաղթութեանը:

ՍՕՖԻԱ, 16 հոկտեմբերի: Պրինցը բացեց ժողովը մի ճառով, որի մէջ հաստատում է իշխանութեան խաղաղ դրութիւնը, թուում է առաջարկվելի օրինագծերը: Ոչինչ յայտարարութիւններ արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ ճառը չէ պարունակում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 հոկտեմբերի: «Нов. Время» լրագիրը լսել է, որ ֆինանսների մինիստրութիւնը հրաժարվեց կառավարչական և հասարակական հաստատութիւնների մէջ ծառայողներին հարկի ենթարկելու ծրագրից:

ԲՐԷՍՏ, 17 հոկտեմբերի: «Димитрій Донской» ֆրեգատի բազմաթիւ նաւաստիները ծովափը իջնելով, համակրական ցոյցերի առարկայ դարձան. երեկոյեան ջահաւոր թափօր տեղի ունեցաւ և ամբողջ քաղաքը լուսաւորված էր. ժողովուրդի անհամար խմբեր շրջում էին փողոցներում. թափօրը կանգ առաւ ծովային վարչութեան տան առաջ և նաւատորմի երաժշտական խումբը նուագեց ռուսաց ազգային օրհներգը և երգեց Մարսելիէզը, որը հասարակութիւնը ընդունեց ոգևորված աղաղակներով:

ՊԱՐԻԶ, 17 հոկտեմբերի: «Journal Officiel» լրագիրը հրատարակել է մինիստրական հրաման, որի զօրութեամբ Ռուսաստանից ծովային ճանապարհով ոչխարներ բերելը թոյլատրվում է նոյն իսկ այն պարագայում, եթէ այդ ոչխարները բերող նաւերը մտել են մինչև անգամ վարակված նաւահանգիստները, բայց այն պայմանով, որ տեղական ֆրանսիական հիւպատոսը վկայական տայ, թէ նաւի հանգիստ առած ժամանակը մի հատ ոչխար կամ եզ ափը չեն տարել և նաւի բեռը ոչ մի յարակցութիւն չէ ունեցել տեղական ոչխարների և եզների հետ:

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ, 17 հոկտեմբերի: Թագաւոր կայսրը և թագուհի կայսրուհին, դանիական թագաւորը և թագուհին, և Ուէլսի իշխանը ժամը 12-ին

անցան «Полярная звѣзда» նաւը դէպի Դանցիգ նաւարկելու համար։

ԼՕՆԴՕՆ, 17 հոկտեմբերի։ Անգլիական բանկը բարձրացրեց իր դիսկօնտը 3-ից մինչև 4%։

ՄՕՍԿՎԱ, 17 հոկտեմբերի։ Նորին Կայսերական Բարձրութիւն գեներալ-նահանգապետը Մեծ Իշխանուհի Ելիսավետա Ֆէօդորօվնայի նախագահութեամբ կազմակերպեց մի կենտրոնական մասնաժողով նուիրատուութիւններ ժողովելու անպտղաբերութիւնից վնասված տեղերի համար։—Քաղաքային դուման վճռեց. 1) քաղաքային վարչութեան մէջ ստորագրութիւն բանալ սովեալների օգտին, 2) թթու հաճարի հացի տակա մտցնել Մոսկվայում և վարչութեանը յանձնել ամեն շաբաթ նրա գները որոշել, ներկայացնելով այդ գները գեներալ-նահանգապետի հաստատութեանը։

ՊԱՐԻԶ, 17 հոկտեմբերի։ Օլէնբուրգեան պրինցը երկուշաբթի օր այցելութիւն արաւ նախագահ Կարնօին։ Երէկ պ. Կարնօ գնաց Մօչավէլի օտէլը, ուր իջևանել էր պրինցը, բայց տանը չը գտնելով պրինցին, թողեց իր այցետոմսը։

ԲՐԷՍՏ, 17 հոկտեմբերի։ Մէրը և նրա օգնականը այցելեցին ռուսաց «Мининъ» նաւի հրամանատարին, ուր նրանց նախաճաշիկ առաջարկվեց։ Առևտրի մասնաժողովի պատգամաւորութիւնը հրաւիրեց ռուս օֆիցէրներին առաջիկայ նոյեմբերի 4-ին լինելի բանկէտին։ «Мининъ» նաւի հրամանատարը խոստացաւ ներկայ լինել բանկէտին և հաղորդեց, որ նոյեմբերի 3-ին պարահանդէս կը կազմի իր նաւի վրա։ Ռուսաց հիւպատոսը և ռուս օֆիցէրները ներկայ էին երէկ երեկոյեան թատրօնական ներկայացմանը և ջերմ ցոյցերի առարկայ էին։

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ իր գրասենեակում ներկայ տարվայ նոյեմբերի 1-ին տեղի կունենայ աճուրդ կապալով տալու համար 447, 5 քառ. սաժէն գետին երկաթուղով բերվող ապրանքների շտեմարան կառուցանելու համար։ Գետինը գտնվում է քաղաքիս 10-րդ մասում, մաքսատան դիմաց։ 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԱՒԱԳԸ սրանով յայտնում է ի գիտութիւն Թիֆլիսի I և II գիլդիայի վաճառականների, քանի որ վաճառականների ընդհանուր ժողովը, որը նշանակված էր հոկտեմբերի 13-ին, Թիֆլիսի որբերի դատարանի համար անդամներ և փոխանդամներ ընտրելու համար՝ չը կայացաւ, բաւականաչափ վաճառականներ չը գալու պատճառով, այդ պատճառով ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ նշանակվում է ԿԻՐԱԿԻ, 20-ին հոկտեմբերի, և պ.պ. վաճառականներին խնդրում են շնորհ բերել նշանակված օրը, ժամը 11½-ին առաւօտեան Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճը վերոյիշեալ նպատակի համար, դրա հետ միասին իմացվում է, որ ընտրութիւնները կը կատարվեն ներկայ գտնված վաճառականների ձայներով։ 2—2

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10,000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%։

Վաճառվում է եղբարց Դովիանօվների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ, Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի։ Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի։ 24—150

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ն. Յ. ԲՕԶԱՐՋԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յարգելի հասարակութեան ուշադրութեանն եմ առաջարկում իմ Ֆաբրիկայում ամենալաւ ֆրանսիական թղթից պատրաստվող

ԳԻԼԶԱՆԵՐԸ առանց սօսինձի։

Այդ գիլզաները պատրաստվում են իմ Ֆաբրիկայում նորերս ստացված ամենանոր սիստեմի ԱՄԵՐԻԿԱԿԱՆ **ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ**։

Պապիրոսներ գործածողները միշտ կարող են ունենալ այդ տեսակ գիլզաներից ամենա եսակ ծխախոտի և ամեն գների պապիրոսներ, որոնք արդէն վաճառվում են ահագին քանակութեամբ։

Նոր է ստացված ամենալաւ յատկութեան և թարմ

ԹԻՒՐՔԱՑ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ծխախոտ։

Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս և ճիշդ կերպով։ 7—10

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆԸ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է հասարակութեանը, որ ներկայ տարվայ դեկտեմբերի 14-ին, ցերեկվայ 12 ժամին, վարչութեանս մէջ տեղի կունենայ **ԱՃՈՒՐԴ ՎԵՐԱՑԻ ԵՒ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ** երկու տարով ԿԱՊԱԼՈՎ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ, սկսած 1892 թւի յունվարի 1-ից մինչև 1894 թւի յունվարի մէկը։ Պայմանները կարելի է կարդալ վարչութեանս գրասենեակում, առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամը։

3—6 (Շ.)

«ՄԻՇՈՒՆԱՑ»

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՐԻՍ ԴՈՒՏՄԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բաքուում բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ։ 45—50 (հ)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեք շաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁ

Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն, և կ. Պոլիս։

ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՒԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի,	11/23 սեպտեմբերի	—	ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱՐՐԻԳ
—	25 սեպտ. (7 հոկտեմբերի)	—	ԱՐՄԵՆԻԱ	— ՏԻԲԱԼ
—	9/21 հոկտեմբերի	—	ՍԻՐԿԱՍԻ	— ԲՕՇԵԼ
—	23 հոկտեմբերի (4 նոյեմբերի)		ԱՆԱՏՕԼԻԱ	— ԳԱՐՐԻԳ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՁՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ։ Ցօմանակների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են։

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճեն դիմել ընկերութեան ագենտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիօնին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Վիկտոր դ'ԱՐՆՕԻՆ, Մէջին-փողոցում, նախկին գեներալ Տէր-Աստուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլդարովին, Կոլիւբիակինսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՕՍՍԻՍԿՈՒՄ պ. Լուի Բընօին։

12—12 (Ե. շ.)

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

1)	ՇՄԻԴԹ,	«Ֆրանկլին», 2 տիպ. սակաւաթիւ	— ր. 40 կ.
2)	»	«Վաշինգտոն», 2 տիպ.	— » 60 »
3)	»	«Հոմերի Իլիականը», պատկերներով.	1 » — »
4)	»	«Հոմերի Ոդիսականը» »	1 » 20 »
5)	ՍՄԱՅԼՍ,	«Բնաւորութիւն»	1 » 50 »
6)	ԱՄԻՋԻՍ,	«Սիրա».	1 » — »
7)	»	«Ապէնինների մինչև Անդէրը»	— » 10 »
8)		«Ռուստէմ և Զոհրաբ»	— » 20 »
9)	ՇԻԼԼԷՐ	«Աւազակներ», ողբերգութիւն.	— » 50 »
10)	ՍՄԱՅԼՍ,	«Ինքնօգնութիւն»	1 » 50 »
11)	ՏՕԼՍՏՕՅ,	«Ռօբինզօն», փոքրերի համար	— » 20 »
12)	»	«Կոլումբ», փոքրերի համար	— » 15 »
13)	ՀԱՅԶԷ,	«Բէաթրիչէ, վէպիկ	— » 30 »
14)	»	«Նօնցայի բերդը», վէպիկ	— » 30 »
15)	ՇՄԻԴԹ,	«Ռէյնեկէ աղուէսը	— » 60 »

Ճանապարհածախսը թարգմանչի վրա է։ Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և կենտրօնական գրավաճառանոցում։ 2—10 (Շ)

Գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բաքուում Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ։

39—50 (·2)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի։
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտերապիա),
ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Վճար—50 կ.։ Հաժախորհրդի (կօնսիլիումի) համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յայտնում է սրանով, որ ընկերութեանս 1891 թւի անդամները կարող են ստանալ կենտրօնական գրավաճառանոցից ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները.

1) Տօլստոյ—Ատուած գիտէ արդարն ու մեղաւորը։
2) Վալտնէր—Հաւատարիմ Սավիտրին։
3) Պէստալոցի—Լինհարդ և Գէրտրուդ։
4) Նալ և Դամայանտի։
5) Ռոզընհարն—Նաւի փոքրաւորը։
6) Սպիրի՝ Ուռենց ցոմսէփ։

9—13

Ստացվել է և վաճառվում է՝ „ԼՈՒՍԱԴԻՄԻՆ“. գինը 1 ռուբլի, ճանապարհածախսով 1 ռուբլի 20 կ.։

Աղօ Մարուն	3 կոպ.
Փոքրիկ լրտես	2 »
Գարիբալդի	10 »

Հայերէն-ռուսերէն բառարան, ճանապարհածախսով 2 ռուբլի։

Պահեստը պ. Տէր-Սարգսեանցի խանութումն է, Դվօրցօվայա փողոցի վրա։ Թիֆլիսի գրավաճառները և գումարով առնողները ունենում են 15% զիջում։ Օտարաքաղաքացիք—20%։ Ճանապարհածախսը գումարով գնողների վրա է։ 5—5

Ծախվում է ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

„Խև-Կարապետ“ վէպը 1 ր., „Շուշան ողբերգութիւն“ (օպէրայի համար) 1 ր.։

Մամուլի տակ է և մինչև նոյեմբերի սկիզբները լոյս կը տեսնի 400—650 մեծադիր երեսներից բաղկացած

ԱԼՄԱՍՏ

Վէպը թիւրքահայերի ՆՈՐԱԳՈՅՆ կեանքից։ Բաժանորդագրութիւնը շարունակվում է ռուբլի 50 կոպէկ լոյս տեսնելուց յետոյ կը լինի։

Օտար քաղաքացիք կարող են դիմել БАКУ Типографію Теръ-Оганесянцъ.

3—5

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Октября 1891 г.

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.